<<Ոչ պաշտոնական հրատարակություն>>

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
*13 սեպտեմբերի 2006 թ.*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2006 թվականի N 1259-Ն

## 1034 ՎԱԳՈՆՔԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿՈՇԿԵՂԵՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱԿՆՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի դրույթներին համապատասխան և ելնելով սպառողներին թյուրիմացության մեջ գցող գործոնների կանխարգելման անհրաժեշտությունից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հաստատել վաճառքի համար նախատեսված կոշկեղենի հիմնական բաղկացուցիչ մասերի նյութերի մակնշման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից մեկ տարի հետո՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետով հաստատված տեխնիկական կանոնակարգի 9-րդ կետով նախատեսված՝ ներմուծվող կոշկեղենի համար նախատեսված պահանջի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից 2 տարի հետո:

**Հայաստանի Հանրապետության վարչապետ** — ***Ա. Մարգարյան***

2006 թ. սեպտեմբերի 9
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2006 թվականի
օգոստոսի 31-ի N 1259-Ն որոշման

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿՈՇԿԵՂԵՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱԿՆՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1 Վաճառքի համար նախատեսված կոշկեղենի հիմնական բաղկացուցիչ մասերի նյութերի մակնշման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը (այսուհետ տեխնիկական կանոնակարգ) տարածվում է սպառողներին վաճառելու համար նախատեսված կոշկեղենի արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 6406 ծածկագրին համապատասխան հիմնական բաղկացուցիչ մասերի նյութերի մակնշմանը ներկայացվող պահանջների վրա

2 Սույն տեխնիկական կանոնակարգը չի տարածվում՝

ա) օգտագործված և մաշված կոշկեղենի վրա

բ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի «Անհատական պաշտպանության միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1631-Ն որոշմամբ նախատեսված ոտքերի պաշտպանության միջոցների վրա:

### II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3 Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառված են հետևյալ հասկացությունները՝

***կոշկեղեն (կոշիկ)***՝ արտաքին ներգործություններից ոտքերի պաշտպանության համար նախատեսված ներբանով արտադրատեսակ, որն ունի գործնական և գեղագիտական գործառույթներ Կոշկեղեն հասկացությունը կարող է ներառել սանդալներից մինչև բարձրաճիտք կոշիկները

***կոշկեղենի հիմնական բաղկացուցիչ մաս*** կոշիկի վերնամաս, աստառ և միջատակ, արտաքին ներբան

***վերնամաս*** կոշիկի ներբանին ամրացված կառուցվածքային տարրի արտաքին մաս

***աստառ և միջատակ***՝ կոշիկի ներքին մասը կազմող՝ վերնամասի և ներքին ներբանի միջադիր

***աստառ***՝ կոշիկի երեսի ներքին մանրակների լրակազմ՝ առողջապահական ջերմապաշտպանական հատկությունները, ձևակայունությունը բարձրացնելու և ոտքը կոշիկի երեսի արտաքին մանրակների կարերից մեկուսացնելու համար

***միջատակ***՝ կոշիկի ներքին մանրակ, որը տեղադրված է ոտնաթաթի ամբողջ մակերևույթի տակ

***արտաքին ներբան***՝ կոշիկի ներբևի մաս, որն ամրացվում է վերին մասին և շփման արդյունքում կարող է մաշվել

***ներբան***՝ կոշիկի տակի արտաքին մանրակ, որը տեղադրված է ոտնաթաթի ամբողջ մակերևույթի տակ

***կաշի*** կաշի կամ մորթի իր յուրահատուկ թելքային կառուցվածքով որը լրիվ կամ մասամբ վնասված չէ և դաբաղված է քայքայմանը դիմադրելու նպատակով Մազածածկը կամ բուրդը կարող է հեռացվել կամ չհեռացվել Կաշին կարող է պատրաստվել նաև

մորթուց կամ կաշվե հումքից որը մինչև դաբաղումը կամ դաբաղումից հետո բաժանվել է շերտերի կամ առանձին մասերի

Արտաքին երեսապատում ունեցող ամրացված կամ սոսնձված կաշվի մակերեսային շերտերի հաստությունը չպետք է գերազանցի 0 15 մմ-ը

Կաշի չեն համարվում մեխանիկական և (կամ) քիմիական ճանապարհով թելքային մասնիկների փոքր մասերի կամ փոշու մանրացված և այնուհետև կապակցող նյութով կամ առանց դրա թերթերի (կտորների) կամ այլ ձևերի վերածված դաբաղված մորթին կամ կաշվե հումքը

***Երեսապատված կաշի*** կաշի որի վրա կայցված մակերեսային պատվածքը չի գերազանցում արտադրանքի ընդհանուր հաստության մեկ երրորդը բայց 0 15 մմ-ից ավելի է

## III ԿՈՇԿԵՂԵՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱԿՆՇՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4 Կոշկեղենի երեք հիմնական բաղկացուցիչ մասերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են N 1 աղյուսակում

*Աղյուսակ N 1*

| Կոշկեղենի հիմնական բաղկացուցիչ մասի անվանումը | Գրավոր նշումը | Գծապատկերը |
|---|---|---|
| Կոշիկի վերնամաս | AM Վերնամաս<br>F Tige<br>D Obermaterial<br>FI [illegible]<br>NL Bovendeel<br>EN Upper<br>DK Overdel<br>GR *ΠΑΝΩΜΕΡΟΣ*<br>ES Empeine<br>P Parte superior<br>CZ Vrch<br>EST Pealne<br>LV Virsa<br>LT Virsus<br>HU Felsőrész<br>M [illegible]<br>PL Wierzch<br>SI Zgornji del<br>SK Vrch |  |

| | | |
|---|---|---|
| Կոշիկի աստառ և միջատակ | AM Աստառ և միջատակ<br>F Doublure et semelle de propreté<br>D Futter und Decksohle<br>IT Fodera e Sottopiede<br>NL Voering en inlegzool<br>EN Lining and sock<br>DK Foring og bindsel<br>GR ΦΟΔΡΑ ΚΑΙ ΠΑΤΟΣ<br>ES Forro y plantilla<br>P Forro e Palmilha<br>CZ Podšívka a stélka<br>EST Vooder ja sisetald<br>LV Oderē un iekšzole<br>LT Pamušalas ir įklotė<br>HU Bélés és kéдotalpbélés<br>M Inforra u suletta<br>PL Podszewka i wyściółka<br>SI Podloga in vložek (stelјka)<br>SK Podšívka a stielka |  |
| Կոշիկի արտաքին ներբան | AM Արտաքին ներբան<br>F Semelle extérieure<br>D Laufsohle<br>IT Suola esterna<br>NL Buitenzool<br>EN Outer sole<br>DK Ydersel<br>GR ΣΟΛΑ<br>ES Suela<br>P Sola<br>CZ Podešev<br>EST Välistald<br>LV Ārējā zole<br>LT Padas<br>HU Járótalp<br>M Pett ta barra<br>PL Spód<br>SI Podplat<br>SK Podošva |  |

5. Կոշկեղենի հիմնական բաղկացուցիչ մասերի համար պետք է օգտագործվեն հետևյալ նյութերը

ա) կաշի, որի գծապատկերը պետք է համապատասխանի 1-ին նկարում ներկայացված պատկերին



նկար 1

AM Կաշի
F Cuir
D Leder
IT Cuoio
NL Leer
EN Leather
DK Læder
GR ΔΕΡΜΑ
ES Cuero
P Couros e peles curtidas
CZ Useň
EST Nahk
LV Āda
LT Oda
HU Bőr
MT Ġilda
PL Skóra
SI Usnje
SK Koža

*բ) Երեսապատված կաշի, որի գծապատկերը պետք է համապատասխանի 2-րդ նկարում ներկայացված պատկերին*



նկար 2

AM Երեսապատված կաշի
F Cuir enduit
D Beschichtetes Leder
IT Cuoio rivestito
NL Gecoat leder
EN Coated leather
DK Overtrukket læder
GR ΕΠΙΚΑΛΥΜΜΕΝΟ ΔΕΡΜΑ
ES Cuero untado
P Couro revestido
CZ Povrstvená useň
EST Kaetud nahk
LV Pārklāta āda
LT Padengta oda
HU Bevonatos bőr
MT Ġilda miksija
PL Skóra pokryta
SI Krito usnje
SK Povrstvená koža

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ... կան նա նածագործական նյութեր և արհեստական (սինթետիկ) կամ չորոշված ... կան նյութեր, որոնց գծապատկերը պետք է համապատասխանի 3-րդ նկարում ներկայացված պատկերին



Նկար 3

AM Սանածագործված
F Textile
D Textil
IT Tessili
NL Textiel
EN Textile
DK Tekstil-materialer
GR ΥΦΑΣΜΑ
ES Textil
P Têxteis
CZ Textilie
EST Tekstiil
LV Tekstilmateriāls
LT Tekstilė
HU Textil
MT Tessut
PL Materiał włókienniczy
SL Tekstil
SK Textil

դ) այլ նյութեր, որոնց գծապատկերը պետք է համապատասխանի 4-րդ նկարում ներկայացված պատկերին



Նկար 4

AM Այլ նյութեր
F Autres matériaux
D Sonstiges Material
IT Altri materiali
NL Overige materialen
EN Other materials
DK Andre materialer
GR ΑΛΛΑ ΥΛΙΚΑ
ES Otros materiales
P Outros materiais
CZ Ostatní materiály
EST Teised materjalid
LV Citi materiāli
LT Kitos medžiagos
HU Egyéb anyag
MT Materjal ieħor
PL Inny materiał
SL Drugi materiali
SK Iný materiál

6 Կոշկեղենի վերնամասի ու աստառի և միջատակի նյութերի դասակարգումը պետք է կատարվի սույն տեխնիկական կանոնակարգի 5-րդ և 7-րդ կետերի դրույթների հիման վրա` հաշվի չառնելով օժանդակ պարագաները և ամրություն ապահովող միջոցները, ինչպիսիք են կոճի մասի ներսում կարվող կտորները, եզրազարդերը, զարդանախշերը, ճարմանդները, հանգույցները, քուղերի անցքերը կամ նմանատիպ այլ մասեր:

Արտաքին ներբանի նյութերի դասակարգումը պետք է կատարվի սույն տեխնիկական կանոնակարգի 7-րդ կետի համաձայն` հիմք ընդունելով ներբանում պարունակվող նյութերի ծավալը:

7 Մականշվածքում պետք է նշվեն համապատասխան տեղեկություններ կոշկեղենի հիմնական բաղկացուցիչ մասերի այն նյութերի վերաբերյալ, որոնք կազմում են կոշկեղենի վերնամասի ու աստառի և միջատակի արտաքին մակերեսի առնվազն 80 տոկո-

սը և արտաքին ներբանի ծավալի առնվազն 80 տոկոսը եթե նյութերից և ոչ մեկը չի կազմում առնվազն 80 տոկոս ապա տեղեկությունները պետք է նշվեն կոշկեղենի երկու հիմնական բաղկացուցիչ մասերի նյութերի մասին

8 Տեղեկությունները նշվում են անմիջապես կոշկեղենի վրա Արտադրողը կամ նրա լիազոր ներկայացուցիչը սույն տեխնիկական կանոնակարգի 4-րդ և 5-րդ կետերում նշված տեղեկությունները կարող է մակնշել ինչպես գծապատկերների տեսքով այնպես էլ գրավոր նշումների տեսքով որոնք տրվում են հայերենով կամ հայերենով և այլ լեզվով (լեզուներով)

Կոշկեղենի վրա նյութերի գծապատկերները պետք է զետեղված լինեն սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված երեք բաղկացուցիչ մասերի գծապատկերների հետ համատեղ

9 Արտադրողը մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը պետք է ապահովեն Հայաստանի Հանրապետությունում իրացվող Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և ներմուծվող կոշկեղենի հիմնական բաղկացուցիչ մասերի վերաբերյալ սույն տեխնիկական կանոնակարգի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված տեղեկատվության տրամադրումն սպառողին հայերենով

*10 Մակնշումը կատարվում է յուրաքանչյուր կոշիկի զույգի առնվազն մեկի վրա Դա կարող է կատարվել տպագրման, սոսնձման դրոշմման կամ պիտակի միջոցով որը պետք է լինի լավ ամրացված*

*11 Մականշվածքը պետք է լինի չջնջվող տեսանելի իսկ գծապատկերների չափսերը պետք է լինեն բավականաչափ մեծ այնտեղ պարունակվող տեղեկությունները պարզ ընբռնելու համար Մականշվածքը չպետք է թյուրիմացության մեջ գցի սպառողին*

## IV. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

12 Վաճառքի համար նախատեսված կոշկեղենի վրա նշված հիմնական բաղկացուցիչ մասերի մականշվածքների առկայության և սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության պետական վերահսկողությունը պետք է իրականացվի «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության աշխատակազմի**
**ղեկավար-նախարար** **Մ Թոփուզյան**